ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ 376

29 սեպտեմբերի 2023 թվականի N -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» ենթակետով, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշման 6-րդ կետով, ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 2-ի N 137-Ն որոշման 3-րդ կետի պահանջի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի N 330-Ա որոշումը՝

որոշում եմ

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2017 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հանրակրթական ուսումնական հաստատությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 84-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ տողի՝ ՀՀ Սյունիքի մարզի «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնարարել ՀՀ Սյունիքի մարզի «Անգեղակոթի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ կազմակերպության կանոնադրության փոփոխությունը սահմանված կարգով և ժամկետում գրանցել Հայաստանի Հանրապետության արդարադատության

նախարարության աշխատակազմի իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

Հաստատված է էլեկտրոնային ստորագրությամբ

2023թ. սեպտեմբերի 29
ք. Կապան

Digitally signed by GHUKASYAN ROBERT 3712800290